ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

Երևան, Չայլախյան 4
Հեռ. 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan
Tel. 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 269-Ն որոշման հավելվածի 55-րդ, 56-րդ կետերը, Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի 2024թ. հունիսի 5-ի թիվ 89-Ա հրամանը՝ «Ձյուդո», «Աթլետիկա», «Բռնցքամարտ», «Բասկետբոլ», «Ծանրամարտ», «Ըմբշամարտ», «Սամբո», «Կարատե» առարկաների պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին՝ բողոքարկման հանձնաժողովների կողմից նիստ է հրավիրվել 2024թ. հունիսի 12-ին, և ընդունվել են հետևյալ որոշումները.

«Աթլետիկա» առարկայի 2-րդ առաջադրանքի, «Ըմբշամարտ» առարկայի 2-րդ առաջադրանքի, «Սամբո» առարկայի 2-րդ առաջադրանքի, «Ձյուդո» առարկայի 2-րդ և 3-րդ առաջադրանքների, «Ծանրամարտ» առարկայի 4-րդ և 7-րդ առաջադրանքների, «Բասկետբոլ» առարկայի 31-րդ առաջադրանքի, բոլոր առարկաների 8-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ առաջադրանքների քննարկման արդյունքում այս առաջադրանքների համար ատեստավորվողներին միավոր չի տրվում:

«Ձյուդո» առարկայի 5-րդ առաջադրանքի համար միավոր է տրվում բոլոր ատեստավորվողներին, 7-րդ առաջադրանքի համար միավոր է տրվում նաև այն ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան ընտրել են թեստ 1-ի 1, թեստ 2-ի 2, թեստ 3-ի 3, թեստ 4-ի 4 պատասխանները, 31-րդ առաջադրանքի համար միավոր է տրվում նաև այն ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան ընտրել են թեստ 1-ի 1-ին, թեստ 2-ի 2-րդ, թեստ 3-ի 3-րդ, թեստ 4-ի 4-րդ պատասխանները:

Բոլոր առարկաների 12-րդ, 29-րդ, 30-րդ առաջադրանքների համար միավոր է տրվում բոլոր ատեստավորվողներին:

Բոլոր առարկաների 16-րդ առաջադրանքի թեստ 1-ի 2-րդ, թեստ 2-ի 3-րդ, թեստ 3-ի 4-րդ, թեստ 4-ի 1-ին պատասխանները որպես ճիշտ պատասխան ընտրած բոլոր ատեստավորվողներին տրվում է միավոր:

Բոլոր առարկաների 24-րդ առաջադրանքի թեստ 1-ի 4-րդ, թեստ 2-ի 1-ին, թեստ 3-ի 2-րդ, թեստ 4-ի 3-րդ պատասխանները որպես ճիշտ պատասխան ընտրած բոլոր ատեստավորվողներին տրվում է միավոր:

Բոլոր առարկաների 38-րդ առաջադրանքի թեստ 1-ի 6-րդ, թեստ 2-ի 7-րդ, թեստ 3-ի 1-ին, թեստ 4-ի 2-րդ պատասխանները որպես ճիշտ պատասխան ընտրած բոլոր ատեստավորվողներին տրվում է միավոր:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**